ԳԵՏԱՇԷՆԻ ԵՆԹԱՇՐՋԱՆ.

Մոսկովեան «Կոլցո» ծրագիրը գործողութեան մէջ

Ակնյայտ են դառնում Գետաշէն եւ Մարտունաշէն հայաբնակ գիւղերը խորհրդային կանոնաւոր զօրքերի եւ ադրբեջանական ՕՄՕՆականների կողմից ոչնչացնելու ռազմական գործողութեան մանրամասները: Ինչպէս արդէն յայտնի է, Մայիսի 1ին Գետաշէնում պատանդ էր վերցուել այդ գործողութեան ղեկավար, գնդապետ Մաշկովը, որն այնուհետեւ փոխանակուեց ՕՄՕՆականների կողմից գերեւարուած կանանց եւ երեխաների հետ: Հենց նրա մօտ էլ յատնաբերուեց գործողութեան ամբողջ ծրագիրը:

Այդ մասին յայտնում է «Ազատութիւն» ռադիոկայանի ռուսական ծառայութեան թղթակից Դմիտրի Վոլչակը: Նրա այդ հաղորդումը եթեր է արձակուել Մայիսի լոյս 7ի գիշերը:

«Այդ գաղտնի փաստաթղթում պարունակուող տեղեկութիւնները,-հաղորդում է ռադիոկայանի թղթակիցը,-կը հետաքրքրեն ոչ միայն զինուորականներին փորձագէտներին, այլեւ մեր ունկնդիրներին, քանզի դրանք բացայայտ ցուցադրում են Գետաշէնի եւ Մարտունաշէնի բնակիչների դէմ Մոսկուայում ծրագրուած գործողութեան ամբողջ թափը»:

Իսկ ահա թէ ինչ է գրուած փաստաթղթում. գործողութիւնը կրում է «Կոլցո» անունը, պատասխանատուներ՝ Խորհրդային Միութեան ներքին գործերի նախարարութեան ներքին զօրքերի գնդապետ Մաշկով, որի ազդականչն է «Զալիւ», գնդապետ Միշին, ազդականչը՝ «Կուրգան»: Գործողութեանը մասնակցել են թիւ 5478 զօրամասը, ազդականչը՝ «Միրաժ», վաշտի հրամանատարներ Զաւարսկի, Ռիաբով, թիւ 6477 զօրամասը, ազդականչը՝ «Օբրիւ», յատուկ նշանակութեան վաշտը, մարտական ուղղաթիռների օղակը, ազդականչերը՝ «Պենալ-1,2,3», «Կրոն-1,2,3 եւ 4», տանկային ստորաբաժանումը, ազդականչը՝ «Կոստիոր», հրանետիչ հաշուարկը, ազդականչը՝ «Պլամեայ»: Գործողութեանը նաեւ մասնակցել են սակրաւորների խումբը եւ ադրբեջանական ՕՄՕՆի ստորաբաժանումները: Փաստաթղթում, - ընդգծում է Դմիտրի Վոլչակը - իհարկէ, տեղեկութիւններ չկային շրջակայ ադրբեջանական գիւղերից այդտեղ թափուած կողոպտիչների խառնամբոխի մասին, որը, լրացնելով զինուորական ստորաբաժանումների ինչ-որ տեղ կիսատ թողածը, հիմնականում զբաղուած էր գետաշէնցիների եւ մարտունաշէնցիների տների թալանով: Ահա այսպէս, դառը հեգնանքով ասում է «Ազատութիւն» ռադիոկայանի թղթակիցը, թող ամբողջ երկիրն իմանայ այդ գործողութեանը մասնակցած իր «հերոսների» մասին: